№ 184 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5 — 1899 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5 № 184

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱՊԻՒ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արևելեան ֆակուլտետի յիսնամեակի առիթով.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Մեր իրականութիւնից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Տրանսվաալ։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՅԻՍՆԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

—

«Մշակի» անցեալ համարում մենք հաղորդեցինք, որ 1904 թուականին պէտք է լրանայ Պետերբուրգի համալսարանի արևելեան ֆակուլտետի գոյութեան յիսնամեակը և որ այդ առիթով համալսարանը պատրաստում է ֆակուլտետի գործունէութեան մանրամասն պատմութիւնը։ Արևելեան ֆակուլտետի գործունէութեան նշանաւոր ճիւղերից մէկը կազմել է հայագիտութիւնը, որ նպատակ է դրել լուսաբանել հայոց լեզուի և հայոց պատմութեան քիչ ուսումնասիրված կողմերը։ Ֆակուլտետը հրատարակել է հայոց հին ձեռագիրներ և մի շարք հետազօտութիւններ, որոնք մեծապէս նպաստել են հայագիտութեան զարգացման։

Սակայն Կովկասը, որին նուիրված է արևելեան ֆակուլտետի գործունէութեան մի նշանաւոր մասը, ոչ մի ձևով չէ աջակցել ֆակուլտետին աւելի ևս լայնացնելու և բեղմնաւորելու նրա օգտաւէտ գործը և ոչ մի կապ չէ հաստատել նրա հետ։ Մինչդեռ հետազօտութեան ասպարէզը և նրա հետաքրքրութեան ծաւալը շատ ընդարձակվել են և առաջ են եկել բազմաթիւ հարցեր, որոնց քննութիւնը պահանջում է գործողներ, պահանջում է ժամանակ և փող։ Պրոֆեսօր Մարը իր ճառի մէջ, որ խօսեց այս գարնան իր դիսերտացիան պաշտպանելու միջոցին, ցաւ է յայտնում, որ մինչև այժմ գոյութիւն չունի մի գիտական ընկերութիւն, որ նպատակ դրած լինէր Հայաստանի և Վրաստանի հնագիտական ուսումնասիրութիւնը, մինչդեռ այդ ուսումնասիրութիւնը խոստանում է շատ կարևոր հետևանքներ թէ տեսական և թէ նոյն իսկ գործնական տեսակէտից։

Մենք կարծում ենք, որ Անդրկովկասը կարող է իր երախտագիտութիւնը դէպի Ֆակուլտետը արժանաւորապէս տրտայայտել, նպաստելով, որ ֆակուլտետին կից կազմվի այն ընկերութիւնը, որի նպատակը պէտք է լինէր Անդրկովկասի ուսումնասիրութիւնը։ Այդպիսի մի ընկերութիւն թէ օգտաւէտ կը լինէր մեր երկրի համար, որ դեռ կարօտ է ուսումնասիրողների բազմաթիւ խմբերի գործունէութեան և թէ արևելեան ֆակուլտետի համար, որ ձեռք կը բերէր հետազօտողների խմբեր և ուսումնասիրութեան հարուստ նիւթեր։ Այդպիսի մի ընկերութեան անհրաժեշտութիւնը արդէն խօսակցութեան նիւթ է դարձել Պետերբուրգի հայ գաղթականութեան ինտելիգենտ շրջանում, բայց մինչև այժմ գործնական ոչ մի ընթացք չէ ստացել։

Աչքի առաջ ունենալով, որ ոչ մի ձեռնարկութեան անհրաժեշտութիւն այնքան համոզեցուցիչ չէ լինում, քան երբ նա տալիս է գործնական հեռանկներ և որ ամենայն մի հիմնարկութիւն ուժեղ է իր գործողների եռանդով և աշխատանքով, կարելի է այժմեանից իսկ ձեռնարկել այն գործին, որով պէտք է զբաղվի ապագայ ընկերութիւնը, Բագուն և Թիֆլիսը կարող էին և ներկայ հանգամանքներում ժողովել մի յայտնի գումար և յանձնել արևելեան ֆակուլտետին, որպէս զի այժմեանից իսկ սկսվեն տեղական գիտական հետազօտութիւններ Անդրկովկասում։ Այդ հետազօտութիւնները կարճ միջոցում կը տան աչքի ընկնող արդիւնքներ և այդպիսով կը հեշտացնեն աւելի մեծ կազմակերպութեան իրագործութիւնը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

—

Մեր գրականութիւնը չէ զարգանում։ Եւ ինչպէս զարգանայ, երբ չը կայ արդար և անկողմնակալ քննադատութիւն, իսկ դրա փոխարէն թագաւորում է կամ անամօթութեան հասնող ըէկլամ, կամ անդուստ հայհոյանք։ Համարեա ամբողջ մեր գրականութիւնը ամփոփված է պարբերական մամուլի մէջ. և հայ խմբագիրները արդէն հասել են այն դրութեան, որ գիտեն փառաբանել միայն այն, ինչ իրանցն է։ Առևտրական սկզբունքը արդէն կրծում է մեր մամուլի հիմքերը. ինքնագովութիւնը հասնում է իր գագաթնակէտին և մարդ միայն ապշում է, տեսնելով թէ ինչպէս ամեն մէկը ընթերցողները որսալու համար մոռանում է ամեն չափ ու սահման։ Այդ առևտրական իմաստութիւնն է, որ տափակ միջակութիւններին հացնում է համարեա հանճարների աստիճանին։ Մենք չունենք համեստութիւն, գաղափարական գործիչի համեստութիւն։ Մեզանում ամեն մէկը, որ գրում է, մանաւանդ նա, որ մի վէպ, երկու ոտանաւոր է շարադրել, արդէն այնքան բարձր ու ամեն կերպ կատարեալ է համարում իրան, որ նոյն իսկ չէ ուզում լսել ոչինչ քննադատութիւն իր իսկական չափի ու արժանաւորութեան մասին։ Եւ ոչ ոք չէ ուզում հասկանալ, որ գրական անկում չէ կարող չը լինել, քանի որ գրական բարքերի անկումը կատարեալ է. խեղաթիւրված հասկացողութիւնների մէջ հիւանդոտ, ժամանակ դործ միայն կարող է գոյութիւն ունենալ, սա բնական օրէնք է ամեն մի հիմնարկութեան, ամեն մի կենդանի գործի համար։ Մի թէ կարող է որ և է յոյս ունենալ այնպիսի մի տեղ, ուր փառք ստեղծվում է ոչ թէ մի բան լոյս հանելուց յետոյ, այլ նոյն իսկ մինչև լոյս հանելը։ Իսկ այսպիսի երևոյթ մեր մէջ կարելի է նկատել։ Նայեցէք, օրինակ, Կ. Պոլսի հայոց թերթերին։ Դուք կապշէք այն գովասանքներից, որ ամեն մէկը շռայլում է իր աշխատակիցների վերաբերմամբ, շռայլում է տեղի թէ անտեղի։ Այլ ևս չենք խօսում այն ահագին ներբողների մասին, որոնք պարբերաբար նուիրվում են այնպիսի գրական գործիչներին, որոնք առնուազն մանր մունր ոյժեր են։ Բայց ահա մի ամենաթարմ նմուշ մեր գրական բարքերից, որ տալիս է «Սուրհանդակ» լրագիրը.

Յառաջիկայ շաբթու կը սկսինք հրատարակել մեր նոր թերթօնը՝ «Ճախճախուտքին մէջ» որ այնքան շահագրգիռ է որքան յուզիչ, և հոգեբանական նուրբ վերլուծութիւններովը պիտի կրնայ ընթերցողին ուշադրութիւնը լարուած պահել, և ընկերային խնդիրներու վրայ առիթ պիտի տայ խոկալու շարունակ։ Ընթերցողներուն մասնաւոր գոհունակութիւն պատճառելու համար, այս անգամ փոխանակ եւրոպական վէպի մը թարգմանութեան, զոհողութիւն մը ընելով գրել կուտանք զուտ տեղական և տոհմային կեանքէ առնուած այս վէպը, որուն գաղափարի բարձրութեան հետ մէկտեղ լեզուին սահունութիւնն և մաքրութիւնն ալ, մէկ երկու թիւի ընթերցումով պիտի կրնայ հասկցուիլ ու գնահատուիլ։ Շատերը կը հարցնեն թէ ո՞վ է հեղինակը։ Ատիկայ չը պիտի յայտնենք առայժմ, չը նախապաշարելու, չը շլացնելու համար ընթերցողը, որուն՝ գործին գեղեցկութիւնը անձամբ գնահատելու և դատելու առիթը կուզենք տալ։ Բաւական է միայն ըսել թէ ծանօթ անուն մը ունի հեղինակը, և տասնեակ տարիներէ ի վեր կաշխատակցի Պօլսոյ թերթերուն։

Ահա այսպիսի վերաբերմունքն է սպասում գրականութիւնը։ Վէպը դեռ չէ տպված, դեռ ընթերցող հասարակութիւնը ոչինչ հասկացողութիւն չունի նրա մասին, և ահա հրապարակում կանչում են թէ դա մի զարմանալի գործ է, թէ ամեն ինչ պիտի լինի մէջը—և՛ հոգեբանական վերլուծութիւն, և՛ շահագրգիռ նիւթ, և՛ լարված ուշադրութիւն, և՛ առատ նիւթ ընկերային խնդիրների վրա։ Խմբագրութիւնը զոհողութիւն է արել, «գրել տալով» այդ զարմանալի վէպը. խմբագրութիւնը իր ընթերցողներին կատարելապէս ջղային դրութեան հասցնելու համար թագցնում է գրողի անունը։ Եւ դուք կարծում էք թէ սա գրական մի վաստակ չէ, որի գնահատութիւնը ընթերցողների և կողմնակի քննադատութեան իրաւունքն է, այլ նպարավաճառի խանութում ցոյց հանած մի ինչ-որ զարմանալի բան, որի վաճառողը այդպէս գովում, փառաբանում է՝ ախորժակ գրգռելու համար։ Այո, այսպիսի հանգամանքների մէջ դուք է որևէ գրական առաջադիմութեան սպասել. մենք ընդունակութիւն չը պիտի ունենանք արժանապէս գնահատողներ դառնալու. իսկ այդ անընդունակութիւնը մեր գրական արտը որոմներով ծածկելու և ամեն ինչ խեղդելու յատկութիւնն ունի։ Մի կարծէք թէ միայն պօլսական թերթերամատութիւնն է այսպիսի դիրք ստեղծում։ Մեզանում բարքերը աւելի վատ են, աւելի կեղտոտ։ Եւ դեռ երէկ, անցեալ օրն էր, որ մեր անարժան խմբագիրներից մէկը իր մի աշխատակցի ոտանաւորների մասին խօսելիս, անուանում էր նրանց «կլասիկական»։ Մենք կլասիկական բանաստեղծներ ունենք, բայց ոչ իրականութեան, այլ ամենաստոր բեկլամի մէջ։ Թէ այսպէս քայլելով ուր կը գնանք, դա ոչ ոքի համար գաղտնիք չէ։ Գրականութիւնը ոչինչ չէ տալիս, բացի միայն անմիտ գովասանքներից, որոնք կարող են ամեն մի ճաշակ, ամեն մի օրինաւոր հասկացողութիւն փչացնել։ Ահա թէ ուր ենք գնում։

ՄԵՐ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

III

Բայց ինչպէս կամուրջ դցել այն վիհի վրայով, որ բաժանում է մեր ինտելիգենցիան ժողովրդից. ինչպէս օգնել գիւղական աղգաբնակութեան։

Այս դէպքում անհատների ցիր ու ցան, պատահական ջանքերը անզօր են չոչափելի արդիւնք ցոյց տալ։ Անհատը անկարող է և շատ դէպքերում նոյն իսկ իրաւունք չունի մեր բազմաթիւ գիւղերում բանալ դպրոցներ, գրադարան առաւ այդ նոր գաղթականութիւնը, բայց 1852 թուին համարեա զուտով բօէրների չլինքին փաթաթեց քաղաքական անկախութիւն։

Տրանսվաալի հանրապետութեան մէջ չափազանց պարզ նահապետական կարգ ու կանոն էին տիրում։ Բօէրների իւրաքանչիւր ընտանիք ստացաւ հողաբաժին, որի չափը առնուազն 25 քառակուսի վերստ էր։ Այդտեղ բօէրը արածացնում էր իր հօտերը։ Նա ամիսների ընթացքում բաց երկնքի տակ էր քնում։ Ցաք ու ցրիւ ընկած աղգաբնակութիւնը սկսեց հետզհետէ վայրենանալ և քաղաքակիրթ կեանքի կարգերը մոռանալ։ Նա հագնում էր դաղանների մորթի, իր խրճիթն էր մտնում անձրևների չըրջանի ժամանակ և մոռանում էր կարդալը, եթէ մի ժամանակ սովորել էր։ Բօէրի տնային ամբողջ գրադարանը բաղկացած էր տոհմային Աստուածաշնչից, բայց այդ գիրքն էլ շատերը չէին կարողանում կարդալ։ Տարին երեք-չորս անգամ բօէրը լծում էր ձիաները և ընտանիքով գնում էր մօտակայ մատուռը, որ շրջակայ աղգաբնակութեան համար միացնող կենտրոնի դեր էր կատարում։ Այստեղ կատարվում էին հարսանիք, մկրտութիւն, տեղի էր ունենում մեռելների փոխանակութիւն, ապրանք էին գնում և վաճառում։ Այստեղ էլ քննվում էին տեղային և ընդհանուր աղգային հարցեր։ Այսպիսով մատուռը քաղաքային կեանքի սաղմն էր ներկայացնում։

Բայց նահապետական կարգերը անփոփոխ մը-

Տրանսվաալի հանրապետութեան մէջ չափազանց պարզ նահապետական կարգ ու կանոն էին տիրում։ Բօէրների իւրաքանչիւր ընտանիք ստացաւ հողաբաժին, որի չափը առնուազն 25 քառակուսի վերստ էր։ Այդտեղ բօէրը արածացնում էր իր հօտերը։ Նա ամիսների ընթացքում բաց երկնքի տակ էր քնում։ Ցաք ու ցրիւ ընկած աղգաբնակութիւնը սկսեց հետզհետէ վայրենանալ և քաղաքակիրթ կեանքի կարգերը մոռանալ։ Նա հագնում էր դաղանների մորթի, իր խրճիթն էր մտնում անձրևների չըրջանի ժամանակ և մոռանում էր կարդալը, եթէ մի ժամանակ սովորել էր։ Բօէրի տնային ամբողջ գրադարանը բաղկացած էր տոհմային Աստուածաշնչից, բայց այդ գիրքն էլ շատերը չէին կարողանում կարդալ։ Տարին երեք-չորս անգամ բօէրը լծում էր ձիաները և ընտանիքով գնում էր մօտակայ մատուռը, որ շրջակայ աղգաբնակութեան համար միացնող կենտրոնի դեր էր կատարում։ Այստեղ կատարվում էին հարսանիք, մկրտութիւն, տեղի էր ունենում մեռելների փոխանակութիւն, ապրանք էին գնում և վաճառում։ Այստեղ էլ քննվում էին տեղային և ընդհանուր աղգային հարցեր։ Այսպիսով մատուռը քաղաքային կեանքի սաղմն էր ներկայացնում։

Բայց նահապետական կարգերը անփոփոխ մը-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՐԱՆՍՎԱԱԼ

—

Պատերազմը սկսվեց։ Պատերազմ Հաագայի կոնֆերենցիայից հազիւ երկու ամիս անցած...

Վերջին հեռագիրներից մէկը բերեց նախագահ Կրիւգերի հետևեալ նշանաւոր խօսքերը. «Եթէ երկու հանրապետութիւններին վիճակված է Անգլիայի սեփականութիւն դառնալ, այդ հանրապետութիւնները կը ստիպեն այդ բանի համար այնպիսի գին վճարել, որից կապշէ աշխարհը»։ Երկու հանրապետութիւնները Տրանսվաալն ու Օրանժեան հանրապետութիւններն են, որոնք միացրել են իրանց դէնքերը Մեծ-Բրիտանիայի դէմ։ Նրանք յոյս ունեն դէնքի ոյժով պահպանել իրանց ազատութիւնը, իսկ եթէ այդ չյաջողվի, մեռնել այնպէս, ինչպէս վայել է ազատութեան համար կռուողներին։

Բայց ինչից առաջացաւ այդ անհրաժեշտութիւնը։ Տրանսվաալի հարցը ունի մի հետաքրքրքրական պատմութիւն, որի հետ մենք կը ծանօթացնենք մեր ընթերցողներին *)։

*) Մեր դլխաւոր աղբիւրն է «Жизнь» ամսագիրը (№ 8)։

I

Տրանսվաալ հանրապետութիւնը փոքրիկ է իր աղգաբնակութեամբ, բայց տարածութեան կողմից (119,139 քառակուսի մղոն) համարեա հաւասար է Բրիտանիային։ Նա ընկած է արևադարձի երկու կողմերում, ունի չափազանց բարեբաստիկ կլիմա, և բնական հարստութիւնները այդ երկրում շատ և շատ առատ են։ Բերրի հողը և հրաշալի արօտները դէպի իրանց են գրաւում հողագործին և անասնապահին. հարուստ ոսկեհանքերը աշխարհի բոլոր կողմերից ձգում են արագ հարստանալու միջոց որոնողներին։ Հողի տակ կան քարածուխի և ամեն տեսակ ուրիշ հանքերի հարստութիւններ, որոնք դեռ չեն մշակվում, որովհետև աղգաբնակութիւնը և եկեղորները դեռ ոսկով են զբաղված։ Հարաւային Աֆրիկայում կան մի քանի հանրապետութիւններ. բայց դրանցից ոչ ոք Տրանսվաալի պէս բախտաւոր չէ հողի հարստութեան և արդասաւորութեան կողմից։ Երկրի որ կողմում էլ երկրագործը ցանք է անում, նա ստանում է ամեն տեսակ հացահատիկների ամենագեղեցիկ հունձ։ Տրանսվաալի ծխախոտը հռչակված է ամբողջ Հարաւային Աֆրիկայում. լիմոնը և նարինջը շատ առատ պտուղներ են տալիս։

Եւ այդ անագին, օրհնված երկրում ապրում են ընդամենը 345,398 սպիտակամորթ մարդիկ—մի քանակութիւն, որ առանց դժուարութեան կարող էր տեղաւորվել Լօնդոնի մի թաղում։ Այդ փոքրիկ ժողովուրդը վայելում է քաղաքական անկախութիւն։ Պէտք էր սպասել, որ մարդիկ այդտեղ միանդամայն երջանիկ կը լինեն և կօրհնեն իրանց ճակատագիրը։ Բայց զուր չէ ասած. «մարդը մարդու համար գայլ է»։

Դեռ ներկայ դարի սկզբում Տրանսվաալի երկիրը կուսական էր, և սպիտակ մարդը ոտք չէր դրել այնտեղ։ Աֆրիկեան զանազան վայրենի ցեղեր—մաթաբէլ, զուլուս, կաֆիր—այդ երկրի աղգաբնակութիւնն էին կազմում։ 1806 թուականին Անգլիան գրաւեց Հարաւային Աֆրիկայի ծայրը, որ կոչվում է Կապլանդ։ Այդտեղ ապրում էին հօլլանդացի գաղթականներ, որոնք անգլիական տիրապետութիւնից ազատվելու համար սկսեցին ցրվել դէպի հիւսիս։ Երեսնական թուականների կէսին այդ սպիտակ գաղթականները, որոնք անուանվում են բօէր կամ բուրդեր, առաջին անգամ երևացին Տրանսվաալում և մի քանի տարի կռիւ մղելով ընիկների դէմ, գրաւեցին այդ երկիրը։ Շատ ծանր էր այդ կռիւը. իւրաքանչիւր քայլ հողը իրանց արիւնով էին գնում այդ եկեղ հողագործներն ու անասնապահները. մեծամամնութիւնը ընկաւ պատերազմների մէջ և մարդակեր վայրենիների կերակուր դարձաւ։ Մրցութիւնը երկար շարունակվեց. իրանց տիրապետութիւնը հաստատելուց յետոյ էլ բօէրները երկար ժամանակ կռիւ էին վարում վայրենիների դէմ։ Անգլիան իր հովանաւորութեան տակ առաւ այդ նոր գաղթականութիւնը, բայց 1852 թուին համարեա զուտով բօէրների չլինքին փաթաթեց քաղաքական անկախութիւն։

Տրանսվաալի հանրապետութեան մէջ չափազանց պարզ նահապետական կարգ ու կանոն էին տիրում։ Բօէրների իւրաքանչիւր ընտանիք ստացաւ հողաբաժին, որի չափը առնուազն 25 քառակուսի վերստ էր։ Այդտեղ բօէրը արածացնում էր իր հօտերը։ Նա ամիսների ընթացքում բաց երկնքի տակ էր քնում։ Ցաք ու ցրիւ ընկած աղգաբնակութիւնը սկսեց հետզհետէ վայրենանալ և քաղաքակիրթ կեանքի կարգերը մոռանալ։ Նա հագնում էր դաղանների մորթի, իր խրճիթն էր մտնում անձրևների չըրջանի ժամանակ և մոռանում էր կարդալը, եթէ մի ժամանակ սովորել էր։ Բօէրի տնային ամբողջ գրադարանը բաղկացած էր տոհմային Աստուածաշնչից, բայց այդ գիրքն էլ շատերը չէին կարողանում կարդալ։ Տարին երեք-չորս անգամ բօէրը լծում էր ձիաները և ընտանիքով գնում էր մօտակայ մատուռը, որ շրջակայ աղգաբնակութեան համար միացնող կենտրոնի դեր էր կատարում։ Այստեղ կատարվում էին հարսանիք, մկրտութիւն, տեղի էր ունենում մեռելների փոխանակութիւն, ապրանք էին գնում և վաճառում։ Այստեղ էլ քննվում էին տեղային և ընդհանուր աղգային հարցեր։ Այսպիսով մատուռը քաղաքային կեանքի սաղմն էր ներկայացնում։

Բայց նահապետական կարգերը անփոփոխ մը-

բաններ, հիւանդանոցներ, դեղատներ, բանկեր, պօստային հիմնարկութիւններ և այլն։ Անհատական ջանքերից վեր է սակաւահող գիւղացիների համար ձեռք բերել խաներից ու բէգերից հողեր, ձեռնարկել գիւղերում ոռոգման ընդարձակ աշխատութիւններ, անտառներով ծածկել մեր լերկ սարերը, կուել բոյսերի և տաւարի հիւանդութիւնների դէմ, միջոցներ ձեռք առնել անբերրիութեան դէպքում։ Մասնաւոր անձը լիազօրութիւն չունի միջնորդել բարձրագոյն իշխանութեան առաջ տեղական բազմազան դէպքերի համար, նա չէ կարող պահանջել գործադիր իշխանութիւնից աջակցութիւն և այլն, և այլն։ Այդ բոլորի համար պահանջվում է հաստատ, օրինական հող ոտի տակ, այդ բոլորի համար անհրաժեշտ են նիւթական միջոցներ, հարկաւոր է ուժերի միացած, կազմակերպված արտայայտութիւն, պէտք է լինեն որոշ մարմիններ, որոնց հոգատարութեան են յանձնված տեղական գործերը։

Բոլոր քաղաքակրթված ազգերի փորձը անհերքելի կերպով արդէն ապացուցել է, որ ազգաբնակութեան կենսական պէտքերին գոհացում տալու ամենախելացի եղանակը կայանում է տեղական ինքնավարութեան մէջ, իսկ բիւրոկրատիական հրամանագրերով չէ վերանում և ոչ մի կենսական չարիք։ Եւ այդ ճշմարտութիւնը ըմբռնել է ոչ միայն տեղական ինքվարութեան հայրենիքը՝ Անգլիան, այլ և ստիպված էր շատ դաւն փորձերից յետոյ ընդունել և այն Ֆրանսիան, որը ամեն ինչ կենտրօնացրել էր Պարիզում։ Ռուսաստանի կենտրօնական նահանգներում ևս 1864 թուից սկսած մտցրվեց, որոշ չափերով, տեղական գործերի կարգադրութեան այդ եղանակը—ինքնավարութիւնը, զեմստվօն։ Եւ բազմիցս թէ ներքին գործերի և թէ երկրագործական մինիստրութիւնները իրանց պաշտօնական հաշուեւորութիւնների մէջ յայտնել են, որ միշտ ուր կայ զեմստվօ, այնտեղ ժողովրդի բարօրութեան վտանգ սպառնող չարիքները աւելի նուազ ծաւալ են ստացել, քան ոչ-ինքնավարական նահանգներում։

Տեղական բազմազան պէտքերի հոգատարութեան միայն այդ եղանակը կարող է կենդանութիւն տալ մեր թերթած գաւառներին և դարմանել մեր անխնամ գիւղերի խոր ցաւերը։ Ժողովրդի թէ կրթական, թէ մտաւորական, թէ բժշկական ու առողջապահական և թէ հաղորդակցական պէտքերը այնքան բազմակողմանի են և այնքան մեծ կախում ունեն տեղական, ուրոյն պայմաններից, որ մինչև նրանց հոգատարութիւնը չը յանձնվի տեղական ազգաբնակութիւնից ընտրված ներկայացուցչական մարմիններին—անկարելի է մի արդիւնաւոր գործ կատարել։ Մեր երկրում արդէն մուտք է գործել քաղաքային ինքնավարութիւնը և անկասկած միայն ժամանակի խնդիր է նաև նահանգական և գաւառական զեմստվօների մտցնելը։

Այդ կենսական անհրաժեշտ բարենորոգութեան մէջ շահագրգռված են անխտիր Կովկասի բոլոր ազգերը, թէ հայը, թէ թուրքը և թէ վրացին, որոնց անհագին մեծամասնութիւնը գիւղացիներ են և զուրկ քաղաքակրթութեան ամենատարրական բարիքներից։

նալ չէին կարող։ Ազգաբնակութիւնը աճում էր, հետևաբար հողաբաժինները պիտի փոքրանային։ Պէտք է ասել, որ տրանսվաալցիները ամբողջ երկիրը չէին բաժանել իրանց մէջ. այդտեղ մնացին բնիկները. այժմեան ժամանակ նրանց թիւը 748,759 է։ Շատ տեղերում էլ անհնարին էր բնակութիւն հաստատել, որովհետև այնտեղ թագաւորում էր աֆրիկեան սարսափելի ճանճը, ցեցէ անունով, որի խայթոցներից մեռնում են մարդիկ և անասունները։ Երկիրը սկսում է կերպարանափոխվել մանաւանդ այն ժամանակից, երբ նոր գաղթականութիւններ են սկսում գալ դրսից։ Եկողները մեծ մասամբ անգլիացիներ և գերմանացիներ էին։ Դրանք հարստանում էին, հողեր էին ձեռք բերում և Տրանսվաալի քաղաքացիներ էին դառնում. արհեստաւորների, վաճառականների, գործիքների պահանջ էր զգացվում։ Բօէրների միանման կեանքը բարդ հանգամանքներ ընդունեց, հարկաւոր էր սաեղծել աւելի հաստատուն կարգեր և օրէնքներ։

Անկախ երկիր հրատարակվելուց յետոյ Տրանսվաալը սկսեց այդ կազմակերպութիւնը ստեղծել։ Երևան եկաւ երիտասարդ վերանորոգիչների մի կուսակցութիւն, որի պարագլուխներն էին Պրետորիուս և Գաուլ Կրիւգեր։ Պրետորիուս Տրանսվաալի հանրապետութեան իսկական հիմնադիրն էր. նրա անունով էլ մայրաքաղաքը կոչվեց Պրետորիա. իսկ Կրիւգեր այժմեան նախագահն է, որ այնքան մեծ հռչակ է ստացել։

Բայց մինչև այդ վիթխարի կամուրջի շինութիւնը ինչպէս օգնել անդնդի միւս կողմում տառապող ժողովրդին։ Մենք կարող ենք անդնդի վրայով գցել մեր ուժերին համեմատ փոքրիկ կամուրջներ։ Մենք ունենք գիւղատնտեսական, բժշկական, իրաւաբանական և բարեգործական ընկերութիւններ, որոնք մինչև այժմ աւելի տեսական խնդիրներով են զբաղված, քան դառն իրականութեան չարիքների դէմ մաքառելով, որոնք աւելի ի նկատի ունեն քաղաքացիների, քան գիւղացիների պէտքերը, ունևորի, քան չքաւորի կարիքները։ Եթէ այդ ընկերութիւնները այս կամ այն պատճառով անկարող են իրանց նպատակակէտը շինել մասսայի բարօրութիւնը, այն ժամանակ դժուար չէ հիմնել աւելի գործնական ծրագիր ունեցող ընկերակցութիւններ, որոնցից իւրաքանչիւրը հետամուտ կը լինի որոշ իրական չարիքի դէմ մաքառելու։ Օրինակի համար. ինչու չեն կարող կազմվել ընկերակցութիւններ, որոնց նպատակը լինի գեւղերում հիւանդանոցներ և դեղատներ պահել. ինչու անհնար է երկրի զանազան մասերում, նոյն իսկ նահանգական քաղաքներում, բանալ փաստաբանական բիւրօներ, որոնց մէջ ամեն մի գիւղացի միջոց ունենայ ձրի կամ մատչելի գնով խորհուրդներ ստանալ և իր արդար դատը վարելու կամ պաշտպանելու համար գտնել փաստաբաններ։ Մինչև այժմ նրան զրկողները, նրանից ուժեղ խաները, բէգերը և վաչխառուները միջոց ունեն պաշտպաններ վարձել և շատ անգամ միայն դրանց այդ առաւելութիւնը լռեցնում է գիւղացուն։ Ինչու չեն կարող կազմակերպվել ընկերակցութիւններ, որոնց նպատակը լինի գիւղացու և տեխնիկայի ու գիտութեան մէջ միջնորդի պաշտօն կատարելը. գործիքներ, սերմացու, ընտիր տաւար և առհասարակ նրա ծանր աշխատանքը թեթևացնող և աւելի արդիւնաւոր դարձնող միջոցներ հայթայթելը։

Մեր ինտելիգենցիան շատ շուտ կարողանում է հարստանալու և փարթամ կեանք վարելու համար աղբիւրներ գտնել. բայց անկուշտ «եսի» կուռքը մանրացնում է, ստորացնում է, թթացնում է նրան, լցնում է նրա սիրտը ներքին դատարկութեամբ, մեռցնում է նրա մէջ հաստատ դէպի բարին։ Միակ փրկութիւնը բարոյական վերջնական անկումից կայանում է նրանում, որ նա մի քիչ էլ զոհաբերութիւն յանձն առնի, մի քիչ էլ մտածի իր թշուառ գիւղացի եղբօր խաւար, տխուր, զրկանքներով լի կեանքի մասին։ Միայն դրա ցաւերի հետ շփումը կը սթափեցնի մեր ինտելիգենցիան և կունենայ նրա համար այնպիսի կազդուրիչ նշանակութիւն, ինչպիսին ստանում էր առասպելական Անտէյը ամեն անգամ շփվելով մայր հողին. և նա անյաղթ էր մինչև որ չէր կրվել նրանից...

Լեոն Սարգսեան

Մոսկվա

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պարիզ, հոկտեմբերի 5-ին

«Համալսարան» գրական և գիտական ամսաթերթը, որ պիտի հրատարակվէր Պարիզում մեր խմբագրութեան տակ և ծախքերով այս ամսի սկիզբը, մեզմէ անկախ պատճառներով, մէկ

1858-ին այդ կուսակցութեան ջանքերով մշակվեց սահմանադրութիւն։ Պրետորիուս նախագահ ընտրվեց. ամեն մի բօէր, նոյն իսկ նորեկը, ստացաւ բոլոր քաղաքական իրաւունքները, և երկրում հաստատվեցին նահապետական-ռազմկավարական կառավարութեան կարգերը։ Այդ ժամանակից մինչև 1877 թուականը Տրանսվաալը զարգանում էր չափազանց դանդաղ կերպով, բայց խաղաղ էր, թէև շարունակում էր բնիկներին ոչնչացնելու գործը։

Այդ խաղաղ, միակերպ կեանքը 70-ական թուականներին խանգարվում է. Տրանսվաալում յայտնվում է ժամանակակից պատմութեան մէջ ամենաուժեղ դեր կատարող մի նոր տարր—ոսկին։ Թէև սկզբում ոսկու հանքերը շատ էլ հարուստ չէին, բայց մուտացված, կիսավայրենի Տրանսվաալը յանկարծ ստանում է համաշխարհային նշանակութիւն և 1877 թուին Պրետորիա է գալիս անգլիական գործակալը 30 զինված մարդկանց հետ, գրաւում է անպաշտպան մայրաքաղաքը և Տրանսվաալը յայտարարում է անգլիական հող։ Ոսկին հրաշք էր գործել. մօտ քսան տարի առաջ, երբ դեղին մետալը դեռ չէր փայլել այդտեղ, Անգլիան քաղաքական անկախութիւն էր փաթաթել երկրի շլինքին. իսկ այժմ յափշտակում էր հարուստ երկիրը։ Բօէրները սկզբում դիմադրութիւն չը ցոյց տուին, բաւականացան բողոք յայտնելով և վճռեցին սպասել, թէ ինչ կը բերեն դէպքերը։ Իսկ դէպքերը շատ շուտ վրա հասան։ Անգլիան առաջին մինիստր Բիկոնսֆիլդին այրում էր նոր գրաւումներ, յափշտակութիւններ անելու ծարաւը և նա վճռեց անգլիացնել Տրանսվաալը. սկսվեցին հալածանքներ բօէրների հօլանդական լեզուի դէմ, անգլիական լեզուն պաշտօնական լեզու հրատարակվեց և պարտաւորական էր դատարաններում և նոյն իսկ դպրոցներում։ Այս «հայրենասիրական», «ազգային» քաղաքականութիւնը, որին հետևում էր պահպանողական մինիստրութիւնը և որ նրա աջողութեան գլխաւոր հիմքն էր, ազդեցութիւն գործեց բօէրների վրա, որոնք իրանց լեզուն, իրանց սովորութիւններն ու կարգերը սիրելու դժբաղդութիւնն ունէին։ Տրանսվաալից պատգամաւորութիւն գնաց Լօնդոն խնդրելու, որ երկրի ներքին ինքնավարութիւնը, սովորութիւնները և հօլանդական լեզուն անձեռնմխելի մնան։ Լորդ Բիկոնսֆիլդ արհամարհանքով վերաբերվեց այդ պատգամաւորութեան։ Բօէրները զէնքի դիմեցին։ Նրանք, ի հարկէ, յոյս չունէին թէ կը յաղթեն. բայց աւելի լաւ համարեցին քաջաբար մեռնել պատերազմի դաշտում, քան ենթարկվել անգլիական անպատիւ պահանջներին։

Սակայն որքան մեծ եղաւ ամենքի զարմանքը, երբ բօէրները սկսեցին յաղթել անգլիացիներին. երկու ընդհարումների մէջ անգլիացիները յետ քաշվեցին. պարտութիւնը մեծ էր, մանաւանդ երրորդ ընդհարման ժամանակ, որ տեղի ունեցաւ Մաղուբա-Հիլլ տեղի մօտ։ Այդ յաղթութիւնը ոգևորեց Հարաւային Աֆրիկայի

Շաբաթ օր, հոկտեմբերի 2-ին, լրացաւ այն պայմանաժամը, որ նշանակված էր Թիֆլիսի ձիաքաշի կօնցէսիան վերցնելու համար։ Ցերեկվայ 12 ժամին Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը բացեց այն ծրարները, որ ստացվել էին այդ կօնցէսիան վերցնել ցանկացողներից։ Ցայտարարութիւններ ստացվել են հետևեալ ֆիրմաներից և անձերից. 1) Դէլիոս ընկերութիւնից, որի գլխաւոր վարչութիւնը գտնվում է Կեօլնում (այդ ընկերութիւնը լուսաւորում է էլէկտրականութեամբ Պետերբուրգի մի մասը). 2) Պետերբուրգի «Ունիօն» ընկերութիւնից. 3) Բուրժուա եղբայրներից, Պարիզից և 4) Ի. Ի. Գլոտօրացկուց, որը Պարիզում պայմանագիր է կապել ֆրանսիացի ինժենէր Լարմուայի հետ Թիֆլիսի ձիաքաշը կառավարելու համար անհրաժեշտ դրամագլուխը կազմելու նպատակով։ Բոլոր յայտարարութիւնները կարդալուց յետոյ ուղրավան որոշեց՝ յանձնարարել վարչութեան անդամ իշխան Վ. Զէրքէզովին զեկուցում կազմել դումային ներկայացնելու համար, այնպէս որ զեկուցումը պէտք է այդ բոլոր առաջարկութիւնների համեմատական գնահատութիւնն ունի։

—

Մեզ հաղորդում են, որ պարսից կառավարութիւնը Ղազվինի յայտնի դէպքի մասին հետևեալ որոշումն է կայացրել. դնել Ղազվին քաղաքի բնակիչների վրա 18,000 թուման տուգանք, որից 7000 թումանը վճարել փնասված հայերին։

—

Այս տարվայ հոկտեմբերի 1-ից վերացվում է Կարս քաղաքում 1890 թուի դեկտեմբերի 19-ից կառավարչապետի թոյլատրութեամբ սահմանված է խտիսաբ կոչված տուրքը, տասը տարին լրանալու պատճառով։

—

Ստացանք Լևոն Մսերեանցի մի հետազօտութիւնը Մուշի բարբառի մասին ֆրանսերէն լեզուով, որ կրում է «Notice sur la phonétique du dialecte arménien de Mouch» և որ իբրև զեկուցում կարդացված է արևելագէտների XI-երորդ միջազգային ժողովում։ Զեկուցումը բաղկացած է մեծադիր 18 երեսից։

—

Ուրբաթ օր, հոկտեմբերի 1-ին, ներկայացրին «Ֆաուստ» օպերան։ Բացի օր. Գապայեանից (Մարգարիտա), միւսները այնքան էլ աջող չէին։ Շաբաթ տրվեց «Էրնանի», որը ամբողջովին աջող կարելի է համարել։ Կիրակի առաւօտեան խաղացին «Ռուսալկա», որի մէջ իշխանի դերը այս անգամ կատարում էր Զինօվիեվ։ Այս արտիստը գուցէ մի օր խաղալ կը կարողանայ, բայց երգել—հազիւ թէ, որովհետև բոլորովին ձայն չունի։ Կիրակի երեկոյեան տուին երկու օպերա, «Сельская Честь» և «Բիգոլետտո»։ Առաջինը այնքան լաւ չէր, որովհետև Սանդուցելի դերը յարմար չէ Զուլիանիի համար։ Իսկ Բիգոլետտո և Ջիլդա—Բրոդչի և Գապայեան բոլոր ժամանակ հիացնում էին իրանց խաղով և երգով։ Այսօր տրվում է «Հուգենոտներ»։

—

Հին-Նախիջևանի գաւառի ԿՈՒԼԻԲԷԳԻԶԱ գիւղից մեզ գրում են. «Ստեփան Աւագեան, երկար տարիներ ծառայի պաշտօն վարելով Կուլի-

---

բոլոր բօէրներին. և Նատալի, Օրանժեան հանրապետութեան, նոյն իսկ և Կապլանդի բօէրները պատրաստ էին միանալ տրանսվաալցիների հետ։ Բայց այդ միջոցին Կապլանդիայի նահանգապետը անակնկալ կերպով ստացաւ Լօնդոնից հետևեալ հեռագիրը, որ հռչակաւոր դարձաւ պատմութեան մէջ. «Մենք մեղաւոր ենք բօէրների առաջ։ Հաշտութիւն կնքեցէք»։ Հեռագիրը «մեծ ծերունի» Գլադստոնից էր, որ նոր էր բռնել Բիկոնսֆիլդի տեղը։ Չը նայած իրանց ոյժերի գերազանցութեան, անգլիական գեներալները, որոնք պատրաստվում էին ճնշել ամեն մի դիմադրութիւն, հարկադրված եղան նահանջել, ոչ մի յաղթութիւն չը տանելով բօէրների դէմ։ 1881 թուի հաշտութեան դաշնագրով, որ հաստատվեց 1884-ի դաշնագրով Լօնդոնում, Տրանսվաալը ստացաւ անկախութիւն, միայն պարտաւորվելով ուրիշ պետութիւնների հետ առանց Անգլիայի համաձայնութեան ոչինչ դաշնակցութիւն չը կնքել։ Տրանսվաալը այդ փորձանքից դուրս եկաւ աւելի ամրապնդած և հաստատացած։ Նա դարձաւ մի կենտրօն, որ ձգտում էր միացնել Հարաւային Աֆրիկայի բոլոր երկիրները։ Բօէրները յոյս ունէին, որ Տրանսվաալի պատմութեան այդ առաջին փոթորկից շրջանից յետոյ կարող են խաղաղ և եռանդոտ կերպով զարգանալ։

Բայց դա ցնորք էր։ Ոսկին դարձեալ եկաւ խանգարելու այդ բոլոր յոյսերը։

(Կը շարունակվի)

բէկդիզայի դպրոցում և իր ճակատի քրտինքով վաստակելով մի քանի կոպէկներ, ամուսնացել էր և ունի երկու տղայ ու մի աղջիկ: Ստեփանի եղբայր Գրիգորը իր այդին կապալով էր տուել այս տարի հարևան Շաքարաբաղ գիւղի Թուրքերին՝ Իբրահիմին և Թաղիին, որոնք, խմանալով որ Ստեփանը միշտ բացակայ է իր տանից՝ դպրոցում լինելու պատճառով, վճռում են գիշերով Նրա տունը կողոպտել: Երբ Ստեփանի 11 տարեկան տղան գնում է իրանց այդին, որը կից է եղբօր՝ Գրիգորի այգուն, Իբրահիմը և Թաղին հարց ու փորձ են անում նրան թէ՝ «հայրդ, որ այսքան տարի ծառայ է դպրոցում, փող ունի թէ ոչ»: Տղան, ոչինչ չը կասկածելով, պատասխանում է, թէ՝ «ինչու չունի. այս բօպէիս 100 բուբլի մեր փոքրիկ մնդուկումը շորով փաթաթած դրած է:» Նոյն օրը թուրքերը, կաթսա ուզելու պատրուակով, գնում են Ստեփանի տունը, ուսումնասիրում ամեն էլ ու մուտ և վերադառնում այդին: Դրանից յետոյ գալիս է Ստեփանի կին Նուբարը, որը տեսնելով որ իրանց խաղողից թուրքերը գողացել են, բարկանում է նրանց վրա: Այս բանն աւելի ևս գրգռում է Իբրահիմին և Թաղիին, ուստի երբ գիշերը վրա է հասնում, նրանք հաստատ իմանալով որ Նուբարն իր երեք երեխաներով մենակ է, մտնում են տուն և իրանց երկար գօտիով կապում սընդուկը և շտապով դուրս են գալիս: Սակայն, ինչպէս է լինում, դեռ սրահից դուրս չեկած, սնդուկը դիպչելով պատին, ձայն է հանում, որի վրա Նուբարը զարթնում է քնից: Ճանաչելով չարագործներին, նա ուզում է աղմուկ հանել՝ հարևաններին օգնութեան կանչելու համար, բայց Իբրահիմը, ատրճանակի մի հարուած կրծքին ուղղելով, գետին է գլորում խեղճին և ապա երկուսով փախչում են: Նուբարը հերոսաբար վազում է նրանց ետևից, կարծելով թէ փողերը, իր ամուսնու դառն քրտինքը, տարել են և չարունակ օգնութեան է կանչում: Մինչև հարևանները օգնութեան են հասնում, խեղճ կինը հազիւ կարողանում է մրմնջալ՝ Իբրահիմը և Թաղին ինձ սպանեցին, ու մեռնում է: Այսօր առաւօտեան գաւառական պրիստաւը Քիւլթափա եկաւ և արձանագրութիւն կազմեց»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, սեպտեմբերի 23-ին

Այսօր անկուշտ սև հողին յանձնեցինք բարի և ազնիւ ձիրքերով օժտված մի հայուհու մարմինը: Տիկին Մարիամ Բ. Մէլիք-Սարգսեանց երէկ առաւօտ յանկարծամահով կնքեց իր մահկանացուն 29 տարեկան ծաղիկ հասակում, որը թողնելով իր վեց անչափահաս զաւակներին, դեռ վերջինը հազիւ մի ամսական, և ի խորսուգ հատակելով իր ամուսնուն, ծնողներին և բարեկամներին: Հասարակութեան ցնկութեան համաձայն, հանգուցեալի մարմինն ամփոփվեց Լիլաւայ թաղի ս. Սարգիս եկեղեցու բակում:

Թաղման տխուր հանդէսը շատ փառաւոր կերպով տեղի ունեցաւ. Թաւրիզի ամբողջ երկսեռ հասարակութիւնը և յայտնի ազգայիններ ներկայ էին գտնվում, իրանց վերջին յարգանքը նուիրելու բարեգործ տիկնոջ յիշատակին: Ութը պսակներ նուիրված էին հետևեալ հասարակութիւնների և անձնաւորութիւնների կողմից. Լիլաւայի հոգաբարձութիւն, Լիլաւայի երիտասարդութիւն, Լիլաւայի ուսուցչական խումբ, «Խարիսխ» արհեստաւորներ, Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական ընկերութիւն, իր զաւակներ, իր սգաւոր բարեկամներ, բժ. Կ. Փաշայեան և իր ամուսինը: Եկեղեցում դամբանական խօսեց Խաչիկ ծ. վարդապետ Դաղեանց, իսկ գերեզմանի վրա՝ ուսուցիչ պ. Մարտիրոս Ցարութիւնեան:

Տիկին Մարիամի մահով Թաւրիզը մի անփոխարինելի կորուստ է կրում, որի տեղը դեռ շատ ժամանակ պարապ է մնալու: Հանգուցեալը թէև բարձր կրթութիւն չէր ստացած և հազիւ աւարտած էր ծխական դպրոցը, սակայն բնականից ունէր ազնիւ սիրտ, վեհ հոգի, առողջ դատողութիւն, գործելու եռանդ, ուղիղ և օգտակար գաղափարների հետևելու ընդունակութիւն և այդ գաղափարները իրագործելու հաստատուն կամք: Տիկին Մարիամ Թաւրիզի հայուհեաց Բարեգործական ընկերութեան հիմնադիրներից լինելով, իր ամբողջ անձով նուիրված էր նրա սուրբ նպատակին. ինը տարի շարունակ վարած էր վարչութեան անդամակցութիւնը և նրա աջ բազուկն էր: Իր հանգիստը, իր տունը, իր խնամքին կարօտ երեխաներին թողած, գիշեր ցերեկ տնից տուն ժանգալով թշուառներին մխիթարում, գաղթականներին խրատում և օրիորդաց կրթութեան վրա հսկում էր: Իր գիշերվայ հանգստի և քնի ժամերից գողացած ժամերով ընկերութեան հաշիւներն էր պահում. սակայն, վերջերս վարչութեան գործած զանազան զեղծումներին և ապօրինութիւններին մասնակից և մեղսակից չը լինելու համար, գանձապահութեան պաշտօնից հրաժարվեց:

Տիկին Մարիամ, միշտ պաշտպան կանգնելով ճշմարտութեան, առողջ և օգտակար գաղափարներին, անհաւասար կռիւ էր մղում, արհամարհելով նոյն իսկ թշուառների կողմից իր անձին ուղղված վիրաւորանքները: Պարսկաստանի այս խուլ անկիւնում իշխող յայտնի աննպաստ պայմաններում, տգիտութեան և եսականութեան յարուցած խոչնդոտներում, թշնամիների դարբնած շղթաներում, վերջապէս տիրող այս ընդհանուր խաւարի մէջ, մի կին, որպիսին էր տիկին Մարիամ, հատարձակութիւն ունեցաւ, քաջութիւն ու կամք ունեցաւ գաղափարի կռիւ մղելու և խելացի կերպով առաջ տանելու, որտեղ տղամարդիկ վհատվել ու թուլացել էին:

Եւ այս, Թաւրիզի համար մի շատ մխիթարական երևոյթ էր, մանաւանդ եթէ նկատի ունենանք, որ հայ կնոջ դրութիւնը մահմէտական կնոջ դրութիւնից շատ տարբեր չէ:

Տիկին Մարիամ կատարելապէս հաժողված էր, որ ճշմարտութիւնը վերջապէս պիտի յաղթանակէ, օգտակար գաղափարը, միջավայրը շրջապատող խաւարակուռ միջոցը ճեղքելով հասնելու է իր նպատակին:

Փչոտ էք ճանապարհը, բայց տիկին Մարիամ, ստացած արիւնոտ վէրքերին ուշ չը դարձնելով, առաջ անցաւ. քաջութեամբ ոլորտանեց իրաւունքը և իր դրօշակը բարձր պահեց, որի տակ այսօր հաւաքված են Թաւրիզի ճշմարիտ ոյժերը, առաջադէմ, գաղափարական, անձնուէր, ինտելիգէնտ և անկեղծ ոյժերը, և կռիւը շարունակում են:

Տիկին Մարիամի խորհրդովն էր, որ իր յարգելի ամուսինը՝ պ. Բաղդասար Մէլիք-Սարգսեանց 1896 թ-ին Ռուսաստանից և Պարսկաստանից 7000 բուբլի փող հաւաքելով յանձնեց Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան, և այս տարի էլ Թէհրանից 1,100 բուբլի չափ մի գումար:

Այլ աւաղ, կուից առաջ նրա կեանքը վերջացաւ...: Անգութ մահը խլեց մեզանից գաղափարի կռուի դաշտում քաջամարտիկ զինուորը:

Հանգիստ իր ոսկորներին:

Կ. Ֆ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳԼԻԱՅԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—Նիդերլանդիայում վերջին ժամանակներս ազատամիտների պարագլուխ Վան-Գաուտէն մի պարսաւագիր է հրատարակել՝ «Հոլանդիայի պարտականութիւնը հօլանդացիների վերաբերմամբ» անունով: Գրքի հեղինակը հաստատում է, որ Հոլանդիան պարտաւոր է օգնութիւն հասցնել հարաւ-ափրիկական հօլանդացիներին: Եթէ, ասում է նա, Վիլհելմինա թագուհու մինիստրները չը դիմեն օտարերկրեայ կառավարութիւններին, որ նրանք, Հաագայի կոնֆէդերացիայի որոշման համաձայն, միջամտեն, նրանք գործած կը լինեն մի մեծ յանցանք, որովհետև այն, ինչ որ այսօր սպառնում է բոերներին, վաղը կարող է սպառնալ Նիդերլանդիային:»

—Պարիզի Թիւրքաց դեսպանատունը հերքում է այն լուրը, որ իբր թէ Վանի և Սիվասի վիլայէթներում տեղի են ունեցել անկարգութիւններ հայերի և տեղական իշխանութեան մէջ, որի ժամանակ իբր թէ վիրաւորվել է Սիվասի վալին: «Journal des Débats» լրագիրը հաղորդելով այդ լուրը՝ աւելացնում է իր կողմից, որ հիւպատոսների գործակալներն էլ ոչինչ չեն հաղորդել այդ մասին:

—«Times» լրագրի Բերլինի թղթակիցը հաղորդում է, որ գերմանական կայսրը պատուիրել է Պոտսդամում գտնվող բոլոր պրինցներին, որ նրանք անպատճառ ներկայ գտնվեն հօլանդական թագուհիների այցելութեան միջոցին: Այդ հանգամանքին այն նշանակութիւնն են տալիս, որ իբր թէ մտադրութիւն կայ Վիլհելմինա թագուհուն նշանել գերմանական պրինցներից մէկի հետ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

2 հոկտեմբերի

ԴԱՐՄՇՏԱԴ: «Հաւասի գործակալութիւն»: Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհին ժամանեցին այսօր, առաւօտեան մօտ 11 ժամին, ժամասացութեանը նոր եկեղեցին և կրկին վերադարձան Վօլֆսգարտէնի որսորդական պալատը:

ՄՕՍԿՎԱ: Կրէդիտային ընկերութեան գործը: Այսօր ճառեր արտասանեցին՝ Ցվետուխինների, Դրաչեվի և Միխայլովի շահերի պաշտպանները: Պատասխանեցին Լուզգին և Կուրլով պրօկուրորները: Նիստը փակվեց Ուրուսօվի ճառով, որը լրացրեց իր առաջին ճառը նոր մեղադրական փաստերով: Վաղը պաշտպանը կը ներկայացնի իր առարկութիւնները:

ԼԷԴԻ-ՍՄԻԹ: Օրանժեան հանրապետութեան զօրքերը անցան Տինտվայի անցքից 38 մղոն այն կողմը: Եօթանասուն եզերներ ուղարկվեցին առաջապահ հեծելազօրքերին օգնութեան:

ԼՕՆԴՕՆ: Կոլոնիաների մինիստրութիւնը հեռագիր է ստացել Միլներից, որի մէջ հաղորդվում է, թէ գնացքի խորտակումը տեղի է ունեցել Կրաայի անցքում, Մեֆկինգից 37 մղոն դէպի հարաւ:

ԼՕՆԴՕՆ: Զինուորական մինիստրութիւնը հետևեալ հեռագիրը ստացաւ Կապշտադի գլխաւոր հրամանատարից. «Գնացքը երկու 7 ֆունտանոց թնդանօթով ուղարկված է եղել այստեղից Մեֆկինգ և անցեալ գիշեր յարձակումի ենթարկվեց Կրաայի-Պայում: Բէյլները, ինչպէս երևում է, հանած են եղել, այնպէս որ գնացքը դուրս եկաւ գծից: Բօէրները գնացքի վրա թնդանօթներ արձակեցին մօտ կէս ժամ և ապա գրաւեցին նրան: Հեռագրական հաղորդակցութիւնը Մեֆկինգի հետ Կրաայի Պաուի մօտ ընդհատված է: Մեֆկինգից կանանց և երեխաներին ուղարկում են Կապշտադ: Երկու ինդանօթն էլ պատկանում են Կապեան կօլոնիային և հին ձևի էին: Դեռ մանրամասնութիւններ չեն ստացված թէ որքան մարդիկ են կոտորված:

ԿԱՊՇՏԱԴ: Գնացքի մէջ գտնվող բոլոր մարդիկ գերի են վերցրված, բացի մեքենավարից:

ՄԱԴՐԻԴ: Հաւատացնում են, որ Բարցելոնայում երեկոյեան տեղի է ունեցել ընդհարում զօրքերի և ցոյց անողների մէջ:

ԲԱՐՑԷԼՕՆԱ: Ցոյց անողները շրջապատեցին քաղաքային տունը, պահանջելով որ քաղաքային խորհրդի անդամները հրաժարական տան: Քաղաքագլուխը ստիպված եղաւ նիստը փակել: Ժանդարմները յարձակում գործեցին ամբոխի վրա և սարսափ գցեցին նրանց վրա: Ժամի 11-ին կարգը վերականգնվեց: Բոլոր խանութները փակ են: Ցոյց անողները քարեր էին գցում համալսարանի և լրագիրների խմբագրութիւնների վրա:

ԲԼՈՒՄՖՕՆՏԷՆ: Զինուորական դրութիւն է յայտարարված: Դատարանները փակված են: Շտէյն դիմեց բուրգերներին մէկ ազգու ծանուցումով, որի մէջ առաջարկում է նրանց գործ դնել վերջին ոյժերը հանրապետութեան անկախութիւնը պաշտպանելու համար: Շրջաբերականի մէջ բրիտանական հպատակների ուշադրութիւնն է դարձնվում, որ շաբաթ օր, մինչև երեկոյեան ժամի 6-ը, նրանք պարտաւոր են թողնել հանրապետութեան սահմանը, և որ նրանց կը տրվեն քնակութեան համար ժամանակաւոր անցագրեր:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Երէկ Կրասնօվոդսկից Տաշկենտ եկաւ հաղորդակցութեան ճանապարհների մինիստրը: Երեկոյեան, ի պատիւ մինիստրի, գեներալ Դուխովսկոյի մօտ մեծ ճաշկերոյթ կար: Մինիստրը երեկոյեան 10 ժամին յետ դարձաւ:

ԼՕՆԴՕՆ: «Բէյտէրի գործակալութիւն»: Բրիտանական գնացքի վրա բօէրների յարձակվելու մասին, Ֆրէյբուրգի և Մեֆկինգի միջև, ի միջի այլոց, Ֆրէյբուրգից հաղորդում են հոկտեմբերի 12-ից հետևեալը. սեպտեմբերի 30-ին գնացքը, որը դուրս եկաւ այստեղից 15 մարդկանցով և երկու թնդանօթով, առաւօտեան ժամը 11-ից արդէն կռուում է թշնամու հետ: Մինչև ժամի 3-ը դեռ բրիտանական զօրախմբերին չաջողվեց ուղղել հանված բէյլները և հաղորդակցութիւն վերականգնեցնել Մեֆկինգի հետ: Երկու կողմից էլ կրակը սաստիկ էր: Աւելի մեծ գնացքը՝ լանկաշիրեան գնդի հետ, վերադարձաւ Կիմբերլէյ անվնաս:

«Times» լրագիրը հաղորդում է Լէդի-Սմիտից, որ Օրանժեան հանրապետութեան այնտեղ գնացող բուրգերները՝ մօտ 12,000 հոգուց բաղկացած մի զօրախումբ են կազմում:

«Daily Telegraph» լրագրին հաղորդում են, որ Վանդրէնէնեան անցքում գտնվող բօէրների և գեներալ Ուայտի զօրքի մէջ սկսվել է արդէն պատերազմը: Ուայտ կտրականապէս յոյս ունի, որ կը յաղթի:

«Daily News» լրագրի խօսքով, Կապշտադում լուր է ստացվել, որ բօէրները յարձակվել են Մեֆկինգի վրա և արդէն մի քանի պարտութիւններ են կրել:

ԼՕՆԴՕՆ: Երեկոյեան լոյս տեսնող մի քանի լրագիրների մէջ տպված են հեռագիրներ, որոնց մէջ հաղորդված է, թէ բօէրները, Կրօնիէի հրամանատարութեամբ, հիգշաբթի, մօտ կէս գիշերին, սկսեցին Մեֆկինգի պաշարումը: Հետևանքները յայտնի չեն և սպասվում են անհանգստութեամբ, որովհետև բօէրների թնդանօթաձիգ զօրքը աւելի ուժեղ է անգլիականից, որի հրամանատարն է Բօդէն-Պաուէլ:

ԼՕՆԴՕՆ: Երեկոյեան լոյս տեսնող լրագիրներում հրատարակված է Կապշտադից, հոկտեմբերի 2-ից (14), մի հեռագիր, որը հաղորդում է, թէ բօէրները օղը թռցրին մի գնացք, որ գնում էր Մեֆկինգից հեռագրատան ծառայողներով: Լրագիրները նկատում են, որ խօսքը, ըստ երևոյթին, ուրիշ գնացքի մասին է:

3 հոկտեմբերի

ԼՕՆԴՕՆ: Երեկոյեան լոյս տեսնող լրագիրները հաղորդում են, որ Ֆօլկ-Պրուստից ստացած լուրերի համաձայն, բօէրները, գեներալ Կոկկի հրամանատարութեամբ, գրաւեցին այսօր Նիւկեսլ:

ԼՕՆԴՕՆ: Այսօր գեներալ Բուլլէր ճանապարհ ընկաւ իր շտաբով դէպի Սաուպտհամպտոն, որաեղից կուղևորվի այսօր և եթ դէպի Հարաւային Աֆրիկա: Ուելսի իշխանը, Կէմբրիջեան դուքսը, լորդ Ուոլսլէյ և զինուորական մինիստրը ճանապարհ դցեցին Բուլլէրին մինչև կայարանը: Ագգաբնակութիւնը գեներալին աղմկալի ցոյցեր արեց:

ԿԱՊՇՏԱԴ: «Երեք Քոյր» կայարանի մօտ, Կապօան կօլոնիայում, տեղի ունեցաւ երկու գնացքների ընդհարում, որոնք գնում էին փախստականներով Իօհաննէսբուրգից և Բլուէֆոնտէնից: Ութ մարդ սպանված են, եօթը վիրաւորված:

ԲԵՐԼԻՆ: «Norddeutsche Allgemeine Zeitung» լրագրում տպված է. Մի քանի լրագիրներ դրականապէս հաւատացնում են, որպէս թէ Սամօյեան հարցում տեղի կունենայ Գերմանիայի ու Անգլիայի մէջ համաձայնութիւն, որի համաձայն Անգլիան ձեռք է բերում Ուպօլօ գլխաւոր կղզին, իսկ Գերմանիան ստանում է վարձատրութիւն ուրիշ տեղ: Այդ լուրը սխալ է և կարելի է կատարեալ հաւատացած լինել, որ ձեռնհաս շրջաններում Սամօյեան հարցի վերաբերեալ հայեցակէտը մնացել է առանց փոփոխութեան:

ԲԱՐՑԷԼՕՆԱ: Ուսանողները շրջում էին քաղաքում, կազմելով սպանիական և կատալօնեան խմբեր. այդ բանը առաջ բերեց ոստիկանութեան միջամտութիւն, որի ժամանակ վիրաւորվեցին՝ մէկ ոստիկանական ծառայող և մէկ ուսանող:

4 հոկտեմբերի

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ: Կէսօրից յետոյ 2 ժամին «Valkyrien» զրահակիր նաւը, որը գտնվում է պրինց Վալդէմարի հրամանատարութեան տակ, ճանապարհ ընկաւ դէպի Կրետէ:

ՊԱՐԻԶ: Ցուցահանդէսի աշխատութիւնների տեղի վրա պատահեց մի դժբաղդ դէպք. 20 մետր բարձրութիւն ունեցող փայտեր յանկարծ փլվեցին 35 մետր տարածութեան վրա: Փայտերի տակից հանեցին 9 բանուորներին, բայց նրանցից ոչ մէկը մահացու կերպով վիրաւորված չէ:

ԱԼԲԻ: Այստեղ տեղի ունեցաւ նացիոնալիստական ցոյց ծովապետ Բէյլի նախագահութեամբ:

ՄՕՍԿՎԱ: Կրեդիտային ընկերութեան գործի վերաբերեալ դատավճիռը սպասվում է երկուշաբթի:

ԿԱՊՇՏԱԴ: Ինչպէս այժմ պարզվեց, Կրաայի Պաօի մօտ երկաթուղիական գնացքի վրա եղած յարձակման ժամանակ ոչ ոք չէ սպանված:

Արևմտեան սահմանից ոչինչ տեղեկութիւններ չեն ստացված: Այն լուրը դեռ ևս չէ հաստատվում, թէ բօէրները յարձակում են գործել Մէֆկինգի վրա և յետ են մղվել:

Կրաայի Պաօից դէպի հարաւ գտնվող Մարիքօզօ կայարանից հեռացան երկաթուղիական և հեռագրական պաշտօնեաները:

ՊԼԻՄՈՒԹ: Բօմբէյից եկած «Peninsular» մարդատար շոգենաւի վրա յայտնվեց խուլաւոր ժանտախտով հիւանդացած մի չինացի: Ճանապարհորդներին թոյլ տրվեց ափ իջնել և շարունակել իրանց ճանապարհը:

ԲԵՐԼԻՆ: Ցունաց թագաւորը, արքայորդի Նիկոլայի ուղեկցութեամբ, ժամանեց այստեղ: Թագաւորը և արքայորդին կը նախաճաշեն նոցա մեծութիւնների մօտ Նոր պալատում:

ԴՈՒԲԼԻՆ: Մինչև այժմ Լէդի-Սմիտից և Գլէնկէից ոչինչ ճիշդ տեղեկութիւններ չեն ստացված, բացի այն լուրից, թէ Գլէնկէում գիշերապահ զօրքը հրացանաձգութիւն սկսեց բօէրների հետ: Ստացված բոլոր տեղեկութիւնները միաձայն հաղորդում են, որ թշնամին գրաւել է Նիւկէսլը:

ԿԱՊՇՏԱԴ: Այստեղ լուրեր են պատում, որ անգլիական զօրաբաժնին աջողվեց բռնել տբրանսվալեան բօէրներին, որոնք փորձում էին փոխանակ Մաֆէբրիվէրի մօտ կանգնած բօէրների հետ, այնպէս որ Սէյտէ Ֆուանտէնի մօտ, Կիմ-

բերլէյից դէպի հարաւ, տեղի ունեցաւ մի լուրջ կռիւ։ Մինչև երեկոյեան 7 ժամը այդ բանը հաստատող ոչ մի լուր չը ստացվեց։ Ասում են, որ բօէրները գրաւեցին Մարդէբզիդլինգ երկաթուղիական կայարանը, որ գտնվում է Ֆրիբուրգի և Կիմբերլէյի մէջտեղ. բօէրները թընդանօթներ ունէին։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Ասում են, որ Ֆօկսբուրգի և Կիմբերլէյի մէջ պատերազմ է տեղի ունենում։ Այստեղ ստացված տեղեկութիւնների համեմատ, երկաթուղիական հեռագրական գիծը Մօդէբիվէրում, Կիմբերլէյից մօտաւորապէս 25 մղոն հեռաւորութեամբ դէպի հարաւ, փչացած է։

ՊՕ։ Այստեղ կայացաւ գեներալ Բուրբակիի արձանի բացումը։

ԱԼԲԻ։ Այստեղ տեղի ունեցաւ պահպանողական պատգամաւոր Բէյլէի կազմած ցոյցը ի պատիւ զօրքի և հայրենիքի։ Բէյլէի քարտուղարը կալանաւորվեց խռովայոյզ խօսքերի համար։

ՍՕՄԻԻՐ։ Այստեղ բանկէտ կայացաւ ի պատիւ Կենէ-դը-Բօրէպէրի։ Բանկէտն անցաւ առանց միջնադէպքերի։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԱՃԴԱՐԻՆ ԴՐԱՍԵՆԵԱԿԸ

յայտնում է, որ հոկտեմբերի 6-ին, առաւօտեան 10 ժամին, Թիֆլիսի ժողովարանի առջև, Գօլովինսկի պրօսպէկտի վրա, ծախվելու է աճդարով ժողովարանի անպէտք գոյքը, օրինակ՝ աթոռներ, մոմի և կաւիճի դատարկ արկղներ, մոմի կտորներ, դրապրիներ և այլն։

1—2

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Երեքշաբթի օր, հոկտեմբերի 5-ին, ժողովարանի ամարային բնակարանում նշանակված է վերջին ընտանեկան երեկոյթ։

1—2

ԹԻՖԼ. ՀԱՐՈՅ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

վաճառվում են

կենսագրութիւններից՝

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ, Ա. Զօբանեանի . . 50 կ.
ԲՈՒԴՀԱ, կազմ. Ստ. Մալխ. . . . . 20 »
ԿՕՆՖՈՒՑԻՈՍ, կազմ. Գ. Բազր. . . . 20 »
ՊԱՍԿԱԼ, Թ. Գ. Բազր. . . . . 20 »
ԳԱԼԻԼԷՅ, կազմ. Հ. Առաքելեանց . . . 25 »
ՊՈՒՇԿԻՆ, Ս. Լիսիցեանի . . . . . 40 »
ԳԼԱԴՍՏՕՆ, Լէօի . . . . . 80 »

Դիմել՝ Тифлисъ, Тифлисское Общество Изданія Армянскихъ книгъ. կամ Tiflis, (Russie), Société de la publication des livres Arméniens.

4—5

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 13/25 հոկտեմբերի ՄԻՆԳՐԷԼԻԱ չոգենաւը, նաւապետ ՇԵԼՏ։ Եւ այսպէս շաբունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբերէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխովի և Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. և Ի. Մուխֆեանցներին, Նաբերեժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՕՎՕՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիոր Հերշենսօնին։ (և. հ. չ.)

8—20

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԲՐՕԿԱՐ ԵՒ ԿՕՄՊ.

ԾԱՂԿԱՅԻՆ Օ-ԴԷ-ԿՕԼՕՆԻ

ՀՆԱՐՈՂՆԵՐ

ԳՈՐԾ Է ԱԾՎՈՒՄ որպէս օծանելիք, տուալէտային ջուր և օդը մաքրելու համար. (ա 5) 4—10

M. 87646.

„ՎԻԷՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ"

ԱՂԷՔ. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆԻ

Գօլովինսկի Պրօսպէկտի վրա, առաջին գիմնազիայի հանդէպ, տուն Քաշուէթի սուրբ Գէորգ եկեղեցու։

Ստացել ենք մեծ քանակութեամբ աշնանային և ձմերային սեզօնի համար՝

Տղամարդկանց եւ Երեխաների պատրաստի հագուստներ։



Ստացված է նոյնպէս **ՖՕՐՄԷՆՆԻՑ ԶԳԵՍՏՆԵՐ**.— զատասանական, ուսուցչական և աշակերտական—կլասիկական և Բէյլական ուստմնարանների։

Ունենալով մեծ քանակութեամբ մատէրիաներ, ընդունում ենք նաև ամեն տեսակ պատուէրներ։ Գները ՎԵՐԶՆԱԿԱՆ ԵՆ և անհամեմատ էժան։

Վերադիր վճարով պահանջողները պէտք է ուղարկեն պատուէրի 1/5 մասը։

8—40

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԲԱԳԻՈՒՄ

Բացված է ներկայ ուսումնական տարվայ սկզբից

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

ՅԱԿՈՎԲ Յ. ԹԱԴԷՈՍԵԱՆՑԻ

(Ներսիսեան դպրոցի նախկին հոգաբարձուի)

Ընկերակցութեամբ ուսուցիչ պ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԳԱԼՍՏԵԱՆԻ

(քարտուղարի Բագուի հայոց Մարդասիրական ընկերութեան)

Աշակերտներ ընդունվում են երթևեկ, կիսագիշերօթիկ և գիշերօթիկ՝ 7 տարեկան հասակից։ Դպրոցի նպատակն է պատրաստել երեխաներին կլասիկական գիմնազիա և բէյական դպրոց մտնելու համար։ Ուսումը սկսված է սեպտեմբերի 6-ից։

Պայմաններն իմանալու համար դիմել ուսումնարան՝—Տէլէֆոնայա և Ստանիսլավսկայա փողոցների անկիւն, տուն Եղիազարովի։

1—10

Կրթված եւ ինտելիգենտ հասարակութեան համար



Գօլովինսկի պրօսպէկտ, տուն Արաքելովի, Կաղետների կօրպուսի հանդէպ։

ՅՈՒՅՑԱՀԱՆԴԷՍ ՎԵՐՋԻՆ ԵՐԿՈՒ ԴԵՌ ԵՒՍ ԱՊՐՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ **ԱՑՏԵԿՆԵՐԻ** ՑԵՂԻՑ

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԻՆԿԱՍ ՑԵՂԻ ՏՈՀՄԻՑ

Այդ ացտեկները ցոյց են տրված եղել մինչև անգամ Եւրօպայի ամենամեծ քաղաքներում—Բերլինում, Լօնդօնում, Պետերբուրգում, Մօսկվայում և Խարկովում, և գրաւել են գիտնականների առանձին ուշադրութիւնը։ Ացտեկները ներկայացրված են եղել բոլոր մարդաբանական ընկերութիւններին, յայտնի պրոֆէսօրներ դոկտ. Բուդ. Վիրխովին—Բերլինում, պրոֆէսօր Բանկէին—Մինխէնում, պրոֆ. դոկտոր Բուդինդերին—Հայդէլբերգում, պրոֆ. Բրանդին—Խարկովում, որոնք առանձին հետաքրքրութեամբ զննեցին և շատ բան գրեցին նրանց մասին։

ԴԱՋՎԱԾ ԱՄԵՐԻԿՈՒՀԻ ՏԻԿԻՆ **ՄԻՍՍ ԷՄԷԼԻՆԱ,** որին «ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԷՍ» են կոչում։

Միսս Էմէլինա իր մարմնի վրա՝ 300-ից աւելի գեղարուեստական նկարներ ու գլխատառեր ունի, այդ բոլորը շինված են ԱՍՂՈՎ ԾԱԿԾԿԵԼՈՎ, որոնց թիւը հասնում է մինչև 3,000,000։

Ամբողջ դաջելը տևել է 2 տարի և արժէ 4000 դոլլար։

Միսս ԷՄԷԼԻՆԱ շատ հետաքրքիր է նկարիչների, պրոֆէսօրների և առհասարակ ինտելիգենտ հասարակութեան համար։ Խօսում է ֆրանսերէն, անգլիերէն և գերմաներէն։

Դաջել է պրոֆէսօր Աուրելի Զիկագոյում։ Միսս Էմէլինա ներկայացրված է գեղարուեստական ճեմարաններին՝ Բերլինում, Պարիզում և Լօնդօնում։ Ստացել է նա ատոնեստատներ Բեկկեր, Մէնցել և ուրիշ պրոֆէսօրներից։

ՀՍԿԱՅ Ամենամեծ մարդը աշխարհիս երեսին **ԵՐԵԽԱՅ** 16 տարեկան, բարձրութիւնը 3 արշին 6 վերշօկ։

Տեղերի գները 50 և 30 կօպէկ։ Երեխաները մինչև 14 տարեկան և զինուորները վճարում են կէսը։

Բաց է հասարակ օրերը առաւօտեան 10 ժամից, իսկ տօն և կիրակի օրերը՝ առաւօտեան 11 ժամից մինչև երեկոյեան 10 ժամը։

3—6

ՀԱՑԹԱՑԹՈՂ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՊԱԼԱՏԻ

Ա. ՐԱԼԼԻ ԵՒ ԸՆԿ.

ՄՕՍԿՎԱ

ԾԱՂԿԱՋՈՒՐ

ՈՐ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ Է ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՀՈՏԱՒԵՏ ՋՐԵՐԸ.

Սրուակը 60 կ. և 1 բուբլի։

ԾԱՂԿԱՍԱՊՈՆ (բարձր տեսակից)

8 տեսակ հոտով, կտորը 20 կօպ.

ԾԱՂԿԱՅԻՆ ԳԼԻՑԵՐԱՅԻՆ ՍԱՊՈՆ

8 տեսակ հոտով, կտորը 20 կօպ.

ԹԱՒՐԱՅԻՆ ՊՈՒԴՐԱ

Արկղը 25 կօպ. և 50 կօպ.

Москва, 1) Пассажъ Солодовникова. 2) Тверская, д. Спиридонова. С.-Петербургъ, Невскій 18.

Նաև Ռուսաստանի յայտնի դեղատներում։

M. 59808

Բացված է գործարանական պահեստ թղթեղէնների

Գ. Ի. ՊԱԼԼԻԶԷՆ ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՐԺԵՎՍԿԻ ԴՈՐԾԱՐԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՕԶԷԼԷՎՍԿԻ ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Պահեստը գտնվում է Թիֆլիսում, Գօլովինսկի պրօսպէկտի և Գէօրգիէվսկայա փողոցի անկիւնում, տուն Քաշվէթի ս. Գէորգ եկեղեցու։

5—10

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ

Վ. Յ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ելիսավետեան փողոց, տ. № 86. տէլէֆոն № 506։ (Հ.) 45—45

Կարա-Մուրզաի

Մնում է Թիֆլիս մշտական, տալիս է մասնաւոր դասեր երաժշտութեան, դաշնամուրի վրա ներդաշնակութեան թէորիայի և այլն։

Разъѣзжая, № 9, д. Попова, уг. Михайловской и Елизаветинской улицъ. 5—5



БЕРНДОРФСКІЙ МЕТАЛЛИЧЕСКІЙ ЗАВОДЪ

АРТУРЪ КРУППЪ.

ART. KRUPP BERNDORF

ՄՕՍԿՎԱՅՈՒՄ, ԿՈՒԶՆԵՑԿԻ ԿԱՄՈՒՉԻ ՎՐԱ

Առաջարկում է հիւրանոցներին և տնտեսութիւններին իր գործիքները

ՄԻԱՁՈՅԼ ՄԵՏԱՂԻՑ „ԱԼՊԱԿԱ"

Սպիտակ արծաթագոյն, բնական ձևով և ծածկված մաքուր արծաթի թանձր շերտով, նմանապէս ԽՈՀԱՆՈՅԻ ԱՄԱՆԵՂԷՆ, ՄԱՔՈՒՐ ՆԻԿԵԼԻՑ



8—10

M. 26876

Дозволено цензурою, Тифлисъ, 4 Октября 1899 г.

Типографія Грузинск. Т.—ва Большая Ванкская ул., № 27.